# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**10.05.2021թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 25.01.2021թ. N 30-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԾ հարցերով բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Խաչատրյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ Դավիթ Ստեփանյանի, քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ Արման Մխիթարյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի ավագ մասնագետ Վահրամ Դանիելյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, ֆինանսների, հողօգտագործման, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պահպանության և տրանսպորտի ոլորտներում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Լեռնանցք համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Անուշ Խաչատրյան _____

Դավիթ Թամարյան _____

Դավիթ Ստեփանյան _____

Սամվել Խառատյան _____

Արման Մխիթարյան _____

Վահրամ Դանիելյան _____

Համայնքի ղեկավար՝
Լևիկ Աբգարյան _____